

ՀԱՍՏԻՔ՝ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՅՐԸ՝ Երևան, ՀՀ

ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ՝ 17.02.2019

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ամբողջ դրույք

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ անմիջապես

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ երկարաժամկետ

«Ամերիա» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու մասնագետի՝ ընկերության Կառավարման խորհրդատվական ծառայությունների թիմում ծրագրի ղեկավարի թափուր պաշտոնը համալրելու համար: Ծրագրի ղեկավարը պատասխանատու է լինելու Հայաստանում և տարածաշրջանում իրականացվող հանրային խորհրդատվական ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքների համակարգման համար, ինչպես նաև մասնակցելու է *ԵՄ-ի շրջանակային պայմանագրերի ներքո արտաքին աջակցության տրամադրման* համար (ԵՄ արտաքին օժանդակություն ստացող զարգացող երկրներին տեխնիկական օժանդակություն տրամադրելու գործիք (FWC SIEA 2018)) *հատուկ պայմանագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին:*

Հիմնական պարտականությունները

- Գնման ծանուցումների և ստացվող ծառայությունների պատվերների մոնիտորինգ
- Հետաքրքրության հայտերի նախապատրաստում և ներկայացում
- Առաջադրանքների պահանջներին բավարարող որակավորում ունեցող փորձագետների հայտնաբերում և նրանց հետ բանակցությունների վարում
- Առաջադրանքների համար ամբողջական առաջարկների մշակման գործընթացի համակարգում
- Սահմանված ժամկետում ամբողջական առաջարկների ներկայացման ապահովում
- Շնորհիված պայմանագրերի իրականացման համար ռեսուրսների և փորձագետների ներգրավում և պլանավորում
- Շնորհիված պայմանագրերի կառավարում օրական կտրվածքով
- Շնորհիված պայմանագրերի ներքո մատուցվող ծառայությունների մոնիտորինգ և փորձագետների արդյունավետության գնահատում
- Շնորհիված պայմանագրերի ներքո կատարվող աշխատանքների և դրանց արդյունքների որակի վերահսկողության ապահովում

Պահանջվող հմտությունները և փորձը

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, բիզնեսի կառավարման կամ այլ հարակից ոլորտում
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ ծրագրերի նախապատրաստման և/կամ կառավարման ոլորտներում
- Մի քանի շահառուի հետ աշխատելու փորձ
- Հաղորդակցման և զանազան նախագծերում ներգրավվելու զարգացած հմտություններ
- Գերազանց բանակցային հմտություններ
- Տեխնիկական առաջարկների մշակման փորձը կոնկրետ որպես առավելություն:
- Անգլերեն լեզվի (գրավոր և բանավոր) գերազանց իմացությունը պարտադիր է:

Մրցույթին մասնակցելու համար խնդրում ենք լրացնել դիմում/հայտի ձևը, ցանկության դեպքում կցել նաև CV-ն և ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ hr@ameriagroup.am:

Նամակի վերնագրում խնդրում ենք նշել պաշտոնի անվանումը:

Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները: